

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 12/13-4

### ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի 2012 թվականի նոյեմբերի 10-ի խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության մասին
2. Ուսումնական գործընթացը բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում, ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստումը:

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամներ:

*1. Լսեցին* 2011-2012 ուստարվա գործունեության հաշվետվությունը /Զեկուցող՝ Ս. Ամիրխանյան/:

Ներկայացվեց 2011-2012 ուսումնական տարվա հաշվետվությունը՝ ֆակուլտետի գործունեության բոլոր ուղղություններով: Ներկայացվեցին երկու կիսամյակների ընթացքում կատարված աշխատանքները, կազմակերպված միջոցառումները:

Ս. Ամիրխանյանը հանգամանորեն ներկայացրեց նաև 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումները:

*Արտահայտվեցին* Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերգնյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Բագոյանը, Դ. Մովսեսյանը, Ս. Ամիրխանյանը

*Որոշեցին* Հաստատել ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի տարեկան գործունեության հաշվետվությունը և ներկայացնել ԳՊՀ գիտական խորհրդին:

*2. Լսեցին* Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում ուսումնական գործընթացի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման հարցերը:

/Զեկուցող՝ Ս. Ամիրխանյան/

Դեկան Ս. Ամիրխանյանն անդրադարձավ ավարտական կուրսերում դեկանատի կողմից անցկացրած ժողովներին, որտեղ հանգամանորեն քննարկվել են ամփոփիչ ատեստավորմանը նախապատրաստվելու խնդիրները, ներկայացվել է ուսանողների

առաջադիմությունը ըստ առանձին խմբերի և այն առաջիկա միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն:

*Արտահայտվեցին* Հ. Չաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզոյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Բագոյանը, Ս. Ամիրխանյանը

### *Որոշեցին*

1. Հանձնարարել ամբիոններին՝ համապատասխան դասախոսների մասնակցությամբ ավարտական խմբերում կազմակերպել ամփոփիչ ատեստավորման ավարտական հարցաշարերի քննարկումներ՝ ապահովելով բոլոր ուսանողների մասնակցությունը: Կազմել ժամանակացույց և անցկացնել խորհրդատվություններ:
2. Մագիստրոսական թեզերը՝ մինչև պաշտպանությունը, մագիստրոսները պետք է ներկայացնեն համապատասխան ամբիոններում:
3. Դիպլոմային աշխատանքների նախապաշտպանությանը հրավիրել գործընկեր կազմակերպությունների մասնագետ ներկայացուցիչների:
4. Հանձնարարել պրակտիկայի ղեկավարներին՝ հետևողական աշխատանք տանել նախադիպլոմային պրակտիկաներն արդյունավետ և առկա պահանջներին համապատասխան կազմակերպելու համար:

Խորհրդի նախագահ՝

Քարտուղար՝

Ս. Ամիրխանյան

Ն. Խանդանյան